



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

28 May 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Բյուջե – Շարունակեք դիմել օրենսդիր մարմիններին:

Ձեր դիմումները ծառայում են իրենց նպատակին: Մենատն աշխատում է [առաջարկված բյուջեի](#) վրա, որը կարող է կանխել կրճատումները: Ներկայացուցիչների պալատը նույնպես աշխատում է այդ առաջարկի վրա: Օրենսդիր մարմինները պետք է մինչև հունիսի 15-ը բյուջեն ներկայացնեն նահանգապետին: **Սեղմել այստեղ օրենսդիր մարմիններին էլեկտրոնային նամակ ուղարկելու համար:** Պատմեք նրանց ձեր անձնական փորձառությունների մասին, որոնք կօգնեն իրականացնել բյուջեն առանց կրճատումների: Օրինակ՝ նրանք կարող են օգտվել նահանգային պահուստից, անձրևոտ օրվա ֆոնդից, կանխավճարներից և/կամ հետաձգել կամ նվազեցնել CalSTRS և CalPERS կազմակերպությունների դպրոցական շրջանների վճարումները: Մենք կշարունակենք քննարկել բյուջեն կրթական գրասենյակի ժողովների ընթացքում: Մենք հետաձգել ենք նաև բյուջեի ընդունման օրը մինչև հունիսի 25-ը, որպեսզի կարողանանք կանխել կրճատումները: Դուք կարող եք դիտել կրթական գրասենյակի ժողովները [սեղմելով այստեղ](#)

- Հինգշաբթի, հունիսի 4-ին, երեկոյան Ժ. 7 – սովորական ժողով, բյուջեի վերաբերյալ
- Չորեքշաբթի, հունիսի 10-ին, երեկոյան Ժ. 7 – ուսումնասիրություն և բյուջե
- Հինգշաբթի, հունիսի 18-ին, երեկոյան Ժ. 7 – սովորական ժողով, բյուջեի վերաբերյալ
- Հինգշաբթի, հունիսի 25-ին, երեկոյան Ժ. 7 հատուկ ժողով – բյուջեի ընդունում

Դպրոցների բացումը 2020-21 ուսումնական տարվա ընթացքում

Այս շաբաթվա ընթացքում դուք պետք է հարցաթերթիկ ստանաք Ռոբին Անդերսից, հեռակա ուսուցման ընթացքում ստացած ձեր կարծիքը հայտնելու համար: Հարցաթերթիկին կարող եք պատասխանել նաև [սեղմելով այստեղ](#): Մաշատ կարևոր հարցադրում է և ապագա մի քանի շաբաթների ընթացքում կհավաքենք ձեր պատասխանները: Դպրոցները բացելու կոմիտեի

աշխատանքները կսկսվեն մյուս շաբաթ՝ վերանայելով Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի [դպրոցների բացելու ծրագիրը](#) և հարմարեցնելով այն մեզ համար: Հաջորդ շաբաթ, մենք նոր կայքէջ կունենանք, որտեղից կկարողանաք ստանալ այդ տեղեկությունները և տալ ձեր առաջարկները:

Շարունակելով աշխատել միասին մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հարգանքներով,



Դոկտոր Մաթ Շիլլ
Գերատեսուչ